

strativpronomina 112 հետեւ.) Ժեւերուն մէջ գտնուող այ- գերանունն արմատին հետ.

Հնգերի. * *eghōm* “եօ” ալ ըստ Brugmannի Dem. 71 = ցուցական * *e-* (սով. *e-kas*, յուն. *ἐ-κεῖ*) + եւ-ցուցական (ich-deiktisch) * *gho*, * *go*, Հայ. քի մէջ * *եք* Ժեւեր կը սպասէինք, բայց եւ ու-նինք այ-ս, հայ-ս- Ժեւերուն = բաղաձայնին ազ-գեցութեան տակ, ուր = Ժայռը հնգեր. * *kō* է: Brugmann Dem. 72 կ'ենթադրէ, որ յինչաւ * *եւ-* ցուցական * *gho* Ժեւին հինգ. *hyās* ալ. *ayn*, յուն. *χῆός*, *ἐ-χθός*, լատ. *heri* (* *hesi*), *hesternus*, նրգերմ. *ges-tern* բառերն ալ կը պատկանին:

(Հար-սեւիլէի)

ՂՈՒԿԱՍ ԱՅԻՐՈՒՅԱՆԻՆԻ



ԱՅԻՐԱՐԻ ԿՈՒՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՅՈՒՆԵՐԻՆԻ ՀԱՅՈՍԵՆԻ ՄԱՅՈՒՆ

(Հար-սեւիլէի)

Գ. Տարարի:

Աբու Ջաֆար Մ. Ի Ջերիր ատ-Տարարի ծնած է 224/838 թ. Տարախտանի Ամուլ քաղաքում: Ուսումնասիրական ուղեւորութիւնից յետոյ եղիպ-տուում, Ասորիքում եւ Իրաքում (Բաբելոնում), նա հաստատեցաւ վերջապէս Բաղդադում, ուր նա՝ սկզբում իբրեւ ուսուցիչ խալիֆ Է. Ֆիւլէի՝ ապա իւր սեպհական գլխորդը հինեց, Նորա զրական գործունեութիւնը կը տարածուէր ոչ միայն պատ-մութեան վերայ, ուր նա առաւելագոյն իբրեւ հա-տուէր կը հանդիսանայ, այլ արդիւնաբեր էր նաեւ Ղրորսի մեկնութեան եւ իրաւաբանութեան մէջ: Վախճանեցաւ Բաղդադում 310/923 թ. (Geschichte der arabischen Literatur von Carl Brockelmann, I. Band, S. 142, Weimar 1898).

Հեղինակի բազմահատոր համաշխարհային պատմական երկասիրութիւնն, աշխարհի ստեղծ-մանից մինչեւ նորա ժամանակը, Հինջայից յետոյ իբրեւ ժամանակագիր գտաւարած, լոյս է տեսել մի շարք յայտնի արաբացի գիտնականաց խմբա-գրութեանց հետեւեալ տիտղոսի տակ՝ Annales quae scripsit Abu Djafer M. b. Djarir at-Tabari cum aliis ed. de Goeje, 3 series, Lugd. Bat. 1879—98.

Հայաստանի մասին առաջ բերած տեղեկու-թիւնների թէեւ ոչ հարուստ՝ զգալի կերպով կը տարբերին Բեկազորի վկայութիւնից, քաղուած լինելով շատ անգամ բոլորովին տարբեր թէ գրաւոր եւ թէ անգիր աղբիւրներից:

Միջազգայնոց նուաճումն:

(V, 2505).

Ըստ Մայիքի տառնդութեան Միջազգայնոց նուաճեցաւ 17 թ., իսկ ըստ Ի. Խահկի՝ 19 թ. յետ Հինջայի: Օմարը գրեց Սադ. Ի. Աբու Վաք-

Այս եւ հետեւեալ հասուածքն Արապատականի եւ Գարաւոքի նուաճման մասին առաջ կը բերեմ քա-

ջախն, թէ Աստուած նուաճեց Ասորիք եւ Իրաք մուսլիմների համար, ուստի ուղարկիր քեզանից մի զորագունդ Միջազգայն եւ Նշառակիր Նորա վերայ երեքից մէկին խալիֆ Ի. Աւֆուլիին, կամ Հա-շիմ Ի. Օմարային եւ կամ Իյադ Ի. Ղանմին զորա-գունդն: Սադ.՝ ստանալով Օմարի թուղղորդ ուղար-կեց Ղանմին մի գնդով, նորա հետ զինելով Աբու Մուսայ Աշարիին իւր որդու՝ Օմար Ի. Սադի հետ միասին եւ Օմանին Ի. Աբու-Լ-Ասա Ի. Բիշր Ջա-քաֆիին. այս բանը տեղի ունեցաւ 19 թ.:

Իյադ արշաւեց Միջազգայն եւ պաշարեց Ուսայ. քաղաքի բնակիչք խաղաղութիւն կապե-ցին Նորա հետ գլխահարկ տուաւ հիման վրայ. նոյն պայմանով եւ Խառանցիք: Ապա Իյադ ուղար-կեց Աբու Մուսայ Աշարիին Մծբին, իսկ Օմար Ի. Սադին՝ Ռաւեյլայն մուսլիմներից բաղկացած օգնա-կան գնդով. ինքն ընտիր զօրքով գտնոց Գարայ եւ պաշարմամբ գրաւեց քաղաքը. իսկ Աբու Մուսայ առաւ Մծբին: Այս բոլորը կատարեցաւ 19 թ.:

Իյադ ուղարկեց Օմանին Ի. Աբի-Լ-Ասաին Չորրորդ Հայք. այստեղ Սաֆիան Ի. Մուալիթալ Սուլաւին նահատակեցաւ տեղի ունեցած մի ճա-կատամարտի մէջ: Բնակիչք խաղաղութիւն հա-տաւանցին Օմանին Ի. Աբի-Լ-Ասաի հետ՝ իւրաքան-չիւր բնաւորելից մի դէնար վճարելու պայմանով: Իսկ Սայիքի կը պատմէ, թէ Իյադ Ի. Ղանմ գնաց ալ-Քաբայի հեռքերով, երբ Օմար գրեց Սադին, որ նա ուղարկէ ալ-Քաբային 4000 մարդուց բաղկացած գնդով Աբու Օբայդային օգ-նութեան. նոքա ուղեւորեցան Միջազգայն գէպի (Եփրատի) ակունքը: Սուհայլ Ի. Ազգի իւր բնա-ւոր Հասաւ Ռաքբայ: Միջազգայն բնակիչք Եմեսս սալայում՝ լուծով Կովքացիների մերձեանքը ջրուեցան իրանց դիւրելուով. Սուհայլ պաշարեց նոցա, մինչեւ նոքա խաղաղութիւն կապեցին: Այս ժամանակ Իյադ Միջազգայնոց վասնիք քաղաքումն էր: Բնա-կիչք համաձայնեցան գլխահարկ վճարել:

Աբգուլիւհ Ի. Խարան արշաւեց գէպի Տի-գրիս, եկաւ Մոսուլ եւ անցաւ այնտեղից Մծբին. բնակիչք ընդունեցին նորան խաղաղութեամբ եւ այնպէս վարուեցան, ինչպէս եւ Ռաքբայի ժողո-վուրդը:

Երբ Ռաքբայի եւ Մծբինի բնակիչք հնա-գանդեցան, Իյադ առաւ իւր հետ Սուհայլին եւ Աբգուլիւհին, գնաց Խառան եւ Սաֆուրական ինչ որ նորա շըհակայքում գտաւ: Երբ նա բնակեցաւ ծոռ եկաւ, նոքա հրաժարեցան նորան իրանց հա-մաձայնութիւնն ապա գլխահարկ նկատմամբ: Իյադ ընդունեց այս, իսկ ով որ համաձայնեցաւ, նա նո-րան մշտական հարկատու նշանակեց:

Իյադ ուղարկեց Սուհայլին եւ Աբգուլիւհին Ուսայ: Բնակիչք Համաձայնեցան գլխահարկ վճարել. ցանկացողը Նշառակեցաւ մշտական հար-կատու:

(2646) Ի. Խահկի կը պատմէ, թէ 21 թ. Օմար Ի. Սադ Անտարին արշաւեց ... Միջազգայն, իսկ Մուսայ՝ Անտարիայ եւ Կիլիկիայ. միեւնոյն

զուածօրէն, ի բաց թողնելով ինչ ինչ հետաքրքրութիւնից զուրկ մանրամասնութիւններ: